

ՀՀ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԳԼՈԲԱԼ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԻՆԴԵՔՍԻ

Հոդվածը ստացվել է՝ 10.03.25, ուղարկվել է գրախոսման՝ 02.04.25, երաշխավորվել է տպագրության՝ 11.07.25

ԼԻԼԻԿ ԲԵԳԼԱՐՑԱՆ

Ներածություն: 20-րդ դարի 60-ական թվականներից սկսած հասարակական զարգացման համապատկերում «տեխնոլոգիաների զարգացման հետևանքով նոր ձևավորվող հասարակությունների» վերաբերյալ շրջանառվում են տարաբնույթ մոտեցումներ: Նոր հասարակարգերում փոփոխվում են նաև համակարգաստեղծ սոցիալական կապերն ու դրանց փոխազդեցության ձևերը: Այս առումով Թոֆլերը նշում է, որ «նոր տիպի քաղաքակրթությունն իր հետ բերում է նոր կենսառձ, փոփոխվում են կյանքում առաջնորդվելու ձևերը, ձևավորվում են նոր տնտեսական և քաղաքական հարաբերություններ, փոփոխվում է ամբողջ գիտակցությունը»: Հետևապես, փոփոխվում է նաև «մարդու գործոնի» փոխազդեցությունը, և որպես այս հասարակության առանցքային բնութագրիչներ առանձնացվում են արտադրության նոր միջոցները, զբաղվածության բնույթի փոփոխությունները և տեսական գիտելիքի նշանակալի դերը այդ գործընթացում: Նորարարության արտաքին կանոնակարգման և ներքին պաշտոնականացված ընթացակարգերի փոխազդեցությունը նորարարական մշակույթի ձևավորման գրավականներից է:

Տնտեսության հետ գիտության և տեխնոլոգիայի փոխհարաբերությունների խնդիրը ավելի արդիական դարձավ, երբ զարգացած երկրների տնտեսությունների տնտեսական աճի ու մրցունակության վերլուծությամբ պարզ դարձավ, որ այն ավելի համակարգված ու համալիր մոտեցում է պահանջում, թե՛ տեսական-մեթոդաբանական ապահովման, և թե՛ գործնական քաղաքականության իրականացման տեսանկյունից: Շրջանառության մեջ դրվեց Ազգային ինովացիոն համակարգի (ԱԻՀ) ստեղծման ու զարգացման հիմնադրույթը, ըստ որի այն տարբեր ինստիտուտների համակցություն է, որոնցից յուրաքանչյուրն առանձին, միաժամանակ՝ համատեղ, մասնակցում են նոր տեխնոլոգիաների ստեղծմանը՝ ձևավորելով այն հենքը, ինչը կառավարություններին թույլ է տալիս որոշակի քաղաքականության միջոցով ազդել նորարարական գործընթացների վրա: Այդ ցանցում ստեղծվում, համակարգվում և փոխանակվում է գիտելիքի և հմտության համադրության արդյունքը, ինչը բնութագրվում է որպես նոր տեխնոլոգիա: Ինովացիոն տնտեսությունը տեղեկատվական հեղափոխության տրամաբանական շարունակությունն է, որը բնութագրվում է որպես պետության, գործարար միջավայրի և քաղաքացիների միջև սոցիալական, մշակութային, տնտեսական և տեխնոլոգիական հարաբերությունների ամբողջություն: Այսօր այն ավելի համակարգված ու համալիր մոտեցում է պահանջում, թե՛ տեսական-մեթոդաբանական ապահովման, և թե՛ գործնական քաղաքականության

իրականացման տեսանկյունից, որով պայմանավորված է **հոդվածի արդիականությունը**:

Հոդվածի նպատակն է Գլոբալ ինովացիոն ինդեքսի գնահատման համար կիրառվող վերջին մի քանի տարիների ցուցանիշների ուսումնասիրությամբ բացահայտել ինովացիոն հնարավորությունները ՀՀ-ում, ընդգծել մարտահրավերները և առանձնացնել երկրում նոր տեխնոլոգիաների ստեղծման հենքը:

Նպատակի լուծման համար դրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել Գլոբալ ինովացիոն ինդեքսի գնահատման համար կիրառվող հենասյուների ցուցանիշները դրանք համեմատելով տարածաշրջանի երկրների ցուցանիշների հետ,


- առանձնացնել այն գործոնները, որոնք ինովացիոն զարգացման հիմքեր ստեղծող են,

- Հայաստանի տեխնոլոգիական զարգացման միտումների և առանձնահատկությունների վրա ընդգծել մարտահրավերները պետական քաղաքականության մեջ:

Գրականության ակնարկ: Նորարական տեխնոլոգիաների ստեղծման առնչությամբ ներկայացվել են մի շարք տեսական դրույթներ և հայեցակարգեր, որոնք այն հիմնականում դիտարկում են որպես բազմափուլ գործընթաց: Մասնավորապես, Ռ. Կուպերի «փուլերի ու հսկիչ կետերի» համակարգը¹, Փ. Կոենի «անորոշ սկիզբ–նոր արտադրանքի մշակման կարգավորված գործընթաց–առևտրայնացում» մոդելը, փակ ինովացիայի գաղափարին փոխարինման եկած Հ.Չեսթրոյի նորարարության բաց համակարգը, Բ. Մերիֆիլդի նկարագրած տեխնոլոգիաների «մահվան հովիտը» և նշված բոլոր տեսությունները միաձուլող Ն. Դյու Պրեեզի և Լ. Լոուվի «ձագար-շեփորի» մոդելը ընդհանուր առմամբ ամփոփում են տեխնոլոգիական նորարարության գործընթացի հանդեպ ժամանակակից գիտության առանցքային մոտեցումները: Կիրառական տեսանկյունից նորարական տեխնոլոգիաների ստեղծման և դրա կառավարման ռազմավարության հարցում այսօր կարևորվում են այնպիսի մոտեցումներ, ինչպիսիք են՝ Վ. Կոհենի և Դ. Լևինթալի «կլանիչ կարողության» կիրառումը, Փ. Սենգեի «սովորող կազմակերպության» հայեցակարգը, Ի. Նոնակայի և Հ. Տակետուչիի «գիտելիքի պարույրի SECI մոդելը»: «Թվային տնտեսություն» երևույթը տնտեսագետների կողմից նկարագրելու համար օգտագործվում են նաև «նոր տնտեսություն» (New Economy, Stephen B. Shephard, Kevin Kelly), «ապագայի տնտեսություն» (J. Bradford De Long, A. Michael Froomkin), «գիտելիքահենք տնտեսություն» (Գ. Վարդանյան, OECD (Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն) հասկացությունները: Հայաստանում ինովացիոն գործընթացների և կառավարման հարցերը խորապես ուսումնասիրված են ակադեմիկոս Յու. Սուվարյանի աշխատություններում:

¹ Dr. Robert G. Cooper, Product Innovation Best Practices Series , P 3, Perspective: The Stage-Gate Idea-to-Launch Process – Update, What's New and NexGen Systems, 24 P, <https://citeseerx.ist.psu.edu/document?repid=rep1&type=pdf&doi=d5a51046068664b31bcf9a1ee13d79b25eab2d60>

«Ռազմավարական կառավարում. մեթոդաբանությունը և արդի հիմնախնդիրները» (Երևան, 1996) աշխատությունում առանձնակի ուշադրություն է դարձվում «գիտելիքի տնտեսությունը» և «գիտելիքների հասարակությունը» հասկացություններին՝ կարևորելով գիտելիքահենք և ինովացիոն տնտեսությունը: Վերլուծելով գիտության և կրթության փոխազդեցությունը, ինովացիոն միջավայրի ձևավորման համատեքստում Յու. Սուվարյանը կարևորում է այդ համակարգերի ազդեցությունը տնտեսական զարգացման վրա²: Թվային տնտեսության յուրատեսակ բնորոշումը պատկանում է ռուս տնտեսագետ Վ. Ն. Բուգորսկուն: Նա թվային տնտեսությունը դիտարկում է որպես նախորդ տնտեսակարգի տրամաբանական շարունակություն և ներկայացնում է այս շղթայի ձևով՝ Թվային տնտեսություն=ավանդական տնտեսություն+տեղեկատվական ռեսուրսներ և տեխնոլոգիաներ³:



Գծապատկեր 1. Թվային տնտեսության էվոլյուցիոն շղթան⁴

Ռ.Ա. Ֆատխուտովի կարծիքով ինովացիոն գործունեության ակտիվացման արդյունավետ գործիք կարող է դառնալ Տնտեսություն + Տեխնիկա + Կառավարում $\Rightarrow$ Մրցունակություն համակարգը, որը տնտեսության, տեխնիկայի և կառավարման ինտեգրմամբ մեծապես կնպաստի տնտեսավարող սուբյեկտների մրցունակության բարձրացմանը: Մեթոդը ուշադրություն է

² Յուրի Սուվարյան, Ռազմավարական կառավարում. Մեթոդաբանությունը և արդի հիմնախնդիրները, Երևան, «Տնտեսագետ», հրատ., 150 էջ

³ В. Н. Бугорский, Сетевая экономика. М., «Финансы и статистика», 2008, ст .13, https://www.phantastike.com/economy/network_economics_textbook/djvu/view/,

⁴ Տես՝ նույն տեղում

դարձնում ինովացիոն մենեջմենթի գիտական հիմքերին, որոնք ներառում են անհրաժեշտ իրավական ակտերը, առաջարկվող մոտեցումները և ինովացիոն տնտեսության գործիքները: Հեղինակը մշակել է նաև ՌԴ գիտատեխնիկական և ինովացիոն ներուժի պահպանման ու զարգացման ռազմավարական մոտեցումներ⁵:

Մեթոդաբանություն: Հետազոտության մեջ կիրառվել են գիտական ճանաչողության, վերլուծության և համադրման, դիտման և տրամաբանական, ինչպես նաև համեմատության մեթոդները: Հետազոտության իրականացման համար հիմք են հանդիսացել ՀՀ Կենտրոնական բանկի, Ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրվող վիճակագրական տվյալների բազաները, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Կառավարության կողմից մշակված ռազմավարությունները: Հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել նաև օտարերկրյա և հայրենական մասնագիտական գրականությունը: Իրականացվել է վերջին տարիների ընթացքում թվային տնտեսության աճի տեմպերի համեմատական վերլուծություն: Հետազոտությունն ամբողջական դարձնելու համար հիմք ենք ընդունել Գլոբալ ինդեքսի գնահատման համար կիրառվող հենասյուների ու ենթասյուների ցուցանիշները, որը թույլ է տալիս համակողմանիորեն վերլուծություն կատարել և առանձնացնել թվային տնտեսության հնարավորությունների ու մարտահրավերների պատկերը ՀՀ-ում:

Վերլուծություն: Ներկայումս զարգացած երկրների ինովացիոն ներուժը չափվում է բազմաթիվ ինդեքսների միջոցով, որոնք ընդգրկում են տվյալ երկրները առավել բնութագրող զանազան ցուցանիշներ⁶: Ներկայացնենք երկրների իրական ներուժը արտացոլող ինդեքսների զարգացման էվոլյուցիան՝ **EIU Innovation Index, III-BCG, ICI, և GII-INSEAD**⁷:

2007թ. **EIU-ի** (Economist Intelligence Unit) կողմից ներդրվել է նոր մեթոդաբանություն՝ փորձելով 2002-2006թթ. տվյալների հիման վրա մշակել 82 երկրների ինովացիոն ներուժի գնահատման ցուցանիշները և դրանց հիման վրա կատարել կանխատեսում: Հայաստանը այս անգամ չէր ներառվել ուսումնասիրության ցանկում⁸:

III-BCG (Միջազգային ինովացիոն ինդեքս-Բոստոնի խորհրդատվական խումբ, կիրառվել է 2009 թ. Բոստոնում, որպես INSEAD Համաշխարհային ինովացիոն ինդեքսին այլընտրանքային մեթոդ): Մեթոդը ընդգրկում է

⁵Фатхутдинов Р. А, Ф27 Инновационный менеджмент: Учебник для вузов. 6-е изд. — СПб.: Питер, 2011. — 448 с.: ил. — (Серия «Учебник для вузов»)). <https://api.libraryksu.kg/elibrary/books/Fathutdinov%20Innavasionny%20menedgment8578.pdf>

⁶ Rongping Mua, Kangwei Chia, Kaihua Chena, National Innovation Capacity Index: A Cross-Country Comparative Analysis, p 1, <http://idp-journal.casisd.cn/browse/al/al2019/oa/202003/P020200326667865413779.pdf>

⁷ А. В. Милехин, О. В. Иванов., Милехин, А.В. Новый мир индексов : полный справочник по измерениям в демографии, социологии, экономике и других сферах жизни / А. В. Милехин, О. В. Иванов. — 6-е изд., доп. и расш.. — Москва : Эксмо, 2024. , (Экономика для всех). — ISBN 978-5-04-195060-6., с220,

⁸ Rongping Mua, Kangwei Chia, Kaihua Chena, National Innovation Capacity Index: A Cross-Country Comparative Analysis, <http://idp-journal.casisd.cn/browse/al/al2019/oa/202003/P020200326667865413779.pdf>

տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը և ներառում է ցուցանիշներ այնպիսի ոլորտներից, ինչպիսիք են հարկային համակարգը, կրթությունը կամ ինովացիաների ազդեցությունը հասարակության վրա⁹: Աղյուսակ 1-ում ներկայացրել ենք Բոստոնի խորհրդատվական խմբի մեթոդով հաշվարկված Միջազգային ինովացիոն ինդեքսի 2009թ. և 2012թ. ցուցանիշներով առաջին 5 դիրքերում գտնվող պետությունների, ինչպես նաև Հայաստանի դիրքերը:

Աղյուսակ 1

Հայաստանի և առաջին 5 դիրքերում գտնվող պետությունների
Միջազգային ինովացիոն ինդեքսի ցուցանիշները 2009-2012թթ¹⁰

Դիրք		Երկիր	Ցուցանիշ		Ինովացիոն մուտքեր		Ինովացիոն կատարողական	
2009թ	2012թ		2009թ	2012թ	2009թ	2012թ	2009թ	2012թ
1	1	Սինգապուր	2.45	2.45	2.74	2.74	1.92	1.92
2	2	Հւ. Կորեա	2.26	2.26	1.75	1.75	2.55	2.55
3	3	Շվեյցարիա	2.23	2.23	1.51	1.51	2.74	2.74
4	4	Իսլանդիա	2.17	2.17	2.14	2.14	2.00	2.00
5	5	Իռլանդիա	1.88	1.88	1.59	1.59	1.99	1.99
74	75	Հայաստան	-0,66	-0,66	-0.95	-0,75	-0.30	-0,52

2009-2012թթ Հայաստանում ավելացել են ինովացիոն մուտքերը (-0.95-ից -0,75), և նվազել է ինովացիոն կատարողականը (-0.30-ից -0,52), որի արդյունքում ցուցանիշը չի փոփոխվել:

ICI ինդեքսը (կիրառվել է 2010թ, իր մեջ պարունակում է 61 փոփոխական) գնահատում է տնտեսության նորարական ներուժը, ինչպես նաև ազգային

⁹ The International Innovation Index - BCG (Միջազգային ինովացիոն ինդեքս - Բոստոնի խորհրդատվական խումբ). https://www.wipo.int/web-publications/global-innovation-index-2024/assets/67729/2000%20Global%20Innovation%20Index%202024_WEB3lite.pdf

¹⁰ The Innovation Imperative in Manufacturing: How the United States Can Restore Its Edge, 2009. , https://www.hbs.edu/ris/Publication%20Files/Innov_9211_610334c1-4b37-497d-a51a-ce18bbcf435.pdf

նորարարական արդյունավետության ինդեքսը և նորարարական կողմնորոշման ինդեքսը¹¹:

Նորարարական ներդրումների և արդյունքների վերլուծությունը ներկայումս կարելի է իրականացնել՝ ուսումնասիրելով Համաշխարհային ինովացիոն չորրորդ ինդեքսը (GII), որը հրապարակում է Մտավոր Մեփականության Համաշխարհային Կազմակերպությունը (WIPO), վերլուծելով հաշվարկվող երկու խումբ ենթաինդեքսները (ինովացիոն մուտքեր և ինովացիոն ելքեր), որոնք արտացոլում են երկրի ինովացիոն կարողությունները և կատարողականը ու, որոնց ընդհանուր գնահատականի հիման վրա էլ վարկանշավորվում են երկրները: «Համաշխարհային Ինովացիոն Ինդեքս» զեկույցում երկրները դասակարգվում են նաև ըստ իրենց ունեցած եկամտի մակարդակի՝ առանձնացվում են 4 խմբեր, և 2024-ում Հայաստանը միջինից բարձր եկամուտ ունեցող 34 երկրի այս շարքում 15-րդն է:

2020թ. ԳԻԻ զեկույցում ներառվել է 131 երկիր՝ ներկայացնելով աշխարհի բնակչության 93.5%-ը և համաշխարհային ՀՆԱ 97.3%-ը¹²: Իսկ 2023թ. 132 երկրից Հայաստանը զբաղեցնում է 72-րդ տեղը՝ 8 հորիզոնականով բարելավելով դիրքերը 2022 թվականի զեկույցի տվյալների համեմատ¹³: 2024թ. զեկույցում ներառվել է 133 երկիր՝ ներկայացնելով աշխարհի բնակչության 92.8%-ը և համաշխարհային ՀՆԱ 97.5%-ը: Հայաստանը բարելավելով իր դիրքերը՝ 2023թ. համեմատ գրանցել է առաջընթաց 9 դիրքով՝ աշխարհի 133 երկրներից զբաղեցրել է 63-րդ հորիզոնականը, համարվելով նորարարության մեջ նոր բարձունքներ ու առաջընթաց ապահովող առաջատար երկիր¹⁴:

Խոչընդոտների հաղթահարում. 2024թ. ին նորարարության մեջ առաջընթաց ապահոված տնտեսությունները¹⁵

- Առաջատար 20-ի շարք – Իռլանդիա (19-րդ) և Լյուքսեմբուրգ (20-րդ)
- Առաջատար 30-ի շարք – Չեխիայի Հանրապետություն (30-րդ)
- Լավագույն 40-ի շարք – Լեհաստան (40-րդ)
- Առաջատար 50-ի շարք – Սաուդյան Արաբիա (47-րդ) և Քաթար (49-րդ)

¹¹ Rongping Mua, Kangwei Chia, Kaihua Chena, National Innovation Capacity Index: A Cross-Country Comparative Analysis, p 1, <http://idp-journal.casisd.cn/browse/al/al2019/oa/202003/P020200326667865413779.pdf>

¹² Global Innovation Index, 2020, p.60, https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2020.pdf, վերջին մուտք 15.02.2025թ.,

¹³ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ (2021-2026 թթ.) 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, էջ 49, 108էջ <https://www.gov.am/files/docs/5659.pdf>, վերջին մուտք 25.02.2025թ., վերջին մուտք 15.02.2025թ.,

¹⁴ Global Innovation Index 2024, https://www.wipo.int/web-publications/global-innovation-index-2024/assets/67729/2000%20Global%20Innovation%20Index%202024_WEB3lite.pdf p.255,325p., https://www.wipo.int/web-publications/global-innovation-index-2024/assets/67729/2000%20Global%20Innovation%20Index%202024_WEB3lite.pdf, վերջին մուտք 15.02.2025թ.,

¹⁵ նույն տեղում

- Առաջատար 60-ի շարք – Ինդոնեզիան (54-րդ) և Վրաստանը (57-րդ) միանում են լավագույն 60-ին:

- Առաջատար 70-ի շարք – Հայաստան (63-րդ), Չեռնոգորիա (65-րդ), Մարոկկո (66-րդ) և Կոստա Ռիկա (70-րդ) մտնում են լավագույն 70-ի մեջ,

- Առաջատար 80-ի շարք – Բարբադոս(77-րդ), Ղազախստան (78-րդ):

Իսկ աղյուսակ 2-ում բերված են ԵԱՏՄ անդամ երկրների և Հայաստանի հետ սահմանակից պետությունների դիրքերը 2022-2024թթ:

Աղյուսակ 2

ԵԱՏՄ անդամ երկրների և Հայաստանի հետ սահմանակից պետությունների դիրքերը 2022-2024թթ¹⁶¹⁷

Երկիր	2022	2023	2024
Թուրքիա	37	39	37
Ռուսաստան	47	51	59
Հայաստան	80	72	63
Վրաստան	74	65	57
Իրան	53	62	64
Ղասախստան	-	81	78
Ադրբեջան	93	89	95
Բելառուս	77	80	85
Ղրղստան	-	106	99

Աղյուսակ 2-ը վկայում է 2022-2024թթ տարածարժանում 23 հորիզոնականով և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի առաջընթացը, շարքում Ռուսաստանը, Իրանը, Բելառուսը զիջել են իրենց դիրքերը, Թուրքիան պահպանել է միայն նախկին դիրքը:

Աղյուսակ 3

Հայաստանի վարկանշավորումը 2020-2024թթ¹⁸¹⁹

Տարի	Դիրք	Ինովացիոն մուտք	Ինովացիոն ելք
2020	61	83	47
2021	69	85	56
2022	80	82	73
2023	72	83	62
2024	63	79	55

¹⁶ Global Innovation Index 2022, <https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo-pub-2000-2023-en-main-report-global-innovation-index-2023-16th-edition.pdf>, վերջին մուտք 15.02.2025թ.,


¹⁷ Global Innovation Index 2024, p.255, https://www.wipo.int/web-publications/global-innovation-index-2024/assets/67729/2000%20Global%20Innovation%20Index%202024_WEB3lite.pdf, վերջին մուտք 15.02.2025թ.,

¹⁸ Նույն տեղում, էջ 1

¹⁹ Global Innovation Index 2024, p.255, https://www.wipo.int/web-publications/global-innovation-index-2024/assets/67729/2000%20Global%20Innovation%20Index%202024_WEB3lite.pdf, վերջին մուտք 15.02.2025թ.,

2020 թվականին Հայաստանը գտնվում էր 61-րդ հորիզոնականում և երկու տարվա ընթացքում զիջել է իր դիրքերը 19 հորիզոնականով, որը Global Innovation Index-ի ամենամեծ հետընթացներից մեկն է²⁰:

Ի շնորհիվ 2023-ից մի շարք բացակայող ցուցանիշների ներդրման Հայաստանն առաջընթաց է գրանցել «Մարդկային կապիտալ և հետազոտություններ», «Գիտելիքի և տեխնոլոգիական արտադրանք», «Ստեղծագործական արտադրանք», «Շուկայի կատարելագործվածություն» և «Բիզնես գործընթացների բարդություն» հենասյուներում: Միևնույն ժամանակ, անկում է գրանցվել «Ինստիտուտներ» հենասյունում²¹:



Գծապատկեր 3. Հայաստանի յոթ հենասյուների վարկանիշները²²²³

Ստորև բերված աղյուսակում ներկայացրել ենք Հայաստանի 2024թ. ԳԻԻ ցուցանիշների ուժեղ և թույլ կողմերի ուշագրավ ակնարկ:

2022թ. և 2024թ. Հայաստանի ԳԻԻ մուտքային ու ելքային բոլոր յոթ հենասյուների դիտարկումից պարզ է, որ մեծ դրական ազդեցություն ունի «ՏՀՏ ծառայությունների արտահանում» ենթաինդեքսը իր համապատասխանաբար՝ 9 և 8 դիրքով, փոխարենը բացասական է «ՏՏ ծառայությունների ներմուծում»՝ 110 և 108, ենթաինդեքսի ազդեցությունը: «Բարձր տեխնոլոգիաների արտահանում»՝

²⁰ Global Innovation Index, 2020, p.60, https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2020.pdf, վերջին մուտք 15.02.2025թ.,

²¹ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, <https://www.mineconomy.am/page/288>, վերջին մուտք 22.01.2025թ.,

²² Global Innovation Index 2024, p.255,325p., https://www.wipo.int/web-publications/global-innovation-index-2024/assets/67729/2000%20Global%20Innovation%20Index%202024_WEB3lite.pdf, վերջին մուտք 15.02.2025թ.,

²³ Global Innovation Index 2023, <https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo-pub-2000-2023-en-main-report-global-innovation-index-2023-16th-edition.pdf>, վերջին մուտք 15.02.2025թ.,

Նորարարության ուժեղ և թույլ կողմերը²⁴

կոդ	ուժեղ	դիրքը	կոդ	թույլ	դիրքը
	ցուցանիշ			ցուցանիշ	
1.1.2	Ձեռնարկատիրական քաղաքականություններ և մշակույթ	31	1.2.2	Իրավունքի գերակայություն	75
2.2.3	Բարձրագույն կրթության ներգաղթի շարժունակություն, %	39	1.3.1	Քաղաքականության կայունություն բիզնեսի համար	76
2.3.3	Գլոբալ կորպորատիվ R&D ներդրողներ, լավագույն 3, մլն ԱՄՆ դոլար	41	2.1.1	Կրթության վրա ծախսեր, % ՀՆԱ	114
3.3.2	Ցածր ածխածնային էներգիայի օգտագործում, %	45	2.2.2	Գիտության և ինժեներիայի շրջանավարտներ, %	89
4.1.3	Միկրոֆինանսական հաստատություններից վարկեր, % ՀՆԱ	13	2.3.2	Հետազոտությունների և զարգացման ընդհանուր ծախսեր, % ՀՆԱ	85
4.2.3	Վենչուրային կապիտալ ստացողներ, գործարքներ/մլրդ PPP\$ ՀՆԱ	46	3.3.3	շրջակա միջավայր/ՀՆԱ	126
5.1.5	Զարգացած մակարդակով զբաղված կանայք, %	44	4.2.4	Ստացված վենչուրային կապիտալ, արժեք, % ՀՆԱ	91
5.3.2	Բարձր տեխնոլոգիաների ներմուծում, % ընդհանուր առևտուր	41	4.3.3	Ներքին շուկայի մասշտաբ, մլրդ ՓՈԳ \$	106
6.1.3	Օգտագործման մոդելներ ըստ ծագման/մլրդ PPP\$ ՀՆԱ	11	5.1.1	Գիտելիքահեն զբաղվածություն, %	81
6.2.1	Աշխատանքային արտադրողականության աճ, %	8	5.2.2	Համալսարան-արդյունաբերություն ՀԶՀ համագործակցություն	104
6.3.3	"Բարձր տեխնոլոգիաների արտահանում, % ընդհանուր առևտրի"	38	5.2.3	Կլաստերային զարգացման մակարդակ	101
6.3.4	SS ծառայությունների արտահանում, % ընդհանուր առևտրի"	8	5.3.1	Ինտելեկտուալ սեփականության վճարումներ, % ընդհանուր առևտրի	121
7.1.2	Ապրանքային նշաններ ըստ ծագման/մլրդ ՓՈԳ \$ ՀՆԱ	7	5.3.3	SS ծառայությունների ներմուծում,	108
7.1.4	Արդյունաբերական ձևավորումներ ըստ ծագման/մլրդ ՓՈԳ \$ ՀՆԱ	40	6.3.1	Ինտելեկտուալ սեփականության եկամուտներ, % ընդհանուր առևտր	116

²⁴ Global Innovation Index 2024, p.255,325p., https://www.wipo.int/web-publications/global-innovation-index-2024/assets/67729/2000%20Global%20Innovation%20Index%202024_WEB3lite.pdf, վերջին մուտք 15.02.2025թ, էջ 120,

7.2.4	Մտեղծագործական ապրանքների արտահանում, % ընդհանուր առևտրի	16	6.3.2	Արտադրության և արտահանման բարդություն	89
7.3.2	GitHub հանձնարարականներ/մլն բնակչություն (15–69 տարեկան)	36	6.2.4	Բարձր տեխնոլոգիաների արտադրություն, %	98
7.3.3	Բջջային հավելվածների ստեղծում/մլրդ ՓՈԳ \$ ՀՆԱ	36	6.3.5	ISO 9001 որակ/բնապահ-պանական փոխարժեքով ՀՆԱ	121

ենթաինդեքսը բարելավելով իր դիրքը 2022թ. 84-ից 2024թ. գրավել է 38 դիրք և «Բարձր տեխնոլոգիաների ներմուծում» ենթաինդեքսը՝ 61-ից 41, սակայն միջինից բարձր եկամտի մակարդակ ունեցող երկրների խմբում բացասական է «Բարձր տեխնոլոգիաների արտադրություն»՝ 98 և 98, ենթաինդեքսի ազդեցությունը: Համաշխարհային համախառն արտադրանքի մեջ Հայաստանի այս ցուցանիշը կազմում է **4.8%**: Դեռևս շարունակում են բացասական ազդեցություն ունենալ նաև «Կրթության վրա ծախսեր, % ՀՆԱ»՝ 113 և 114, «Գիտության և ինժեներիայի շրջանավարտներ»՝ 98 և 89, «Ինտելեկտուալ սեփականության եկամուտներ»՝ 113 և 121, «Ինտելեկտուալ սեփականության վճարումներ»՝ 122 և 121, ենթաինդեքսները: «Մարդկային կապիտալ և հետազոտություն» հենասյունը 91 դիրքից անցնելով է 89-ին, գրանցել է 0.2% աճ, բարելավելով «բարձրագույն կրթության ներգաղթյալ շարժունակություն» ենթաինդեքսը՝ օտարերկրյա սովորող ուսանողների թիվը՝ հաշված երկրի ամբողջ բարձրագույն կրթությամբ ուսումնառող ուսանողների ընդհանուր թվի համամասնությամբ՝ խմբի երկրների ցուցակում գրանցելով 5.9%-ից 7.3% աճ: Այնուամենայնիվ, 2024 թվականին Հայաստանի ԳԻԻ մուտքային «Կրթության վրա պետական ծախսերի՝ համեմատած ՀՆԱ-ի հետ» ցուցանիշը, որը կազմել է 2.5%, զբաղեցրել է 114-րդ տեղը: Առանձնահատուկ է այն, որ Հայաստանը ԳԻԻ արդյունքի ելքային ցուցանիշում բարելավել է իր դիրքը գիտական հրապարակումների քանակով, որը 2023 թվականին կազմում է 1652²⁵: Հետազոտողների թիվը մեկ միլիոն բնակչի հաշվով անմիջականորեն կապված է գիտական հրապարակումների թվի հետ: Ուստի, հրապարակումների ծավալը բարձրացնելու համար կարևոր է նաև հետազոտողների թվի ընդլայնումը: Սակայն այստեղ Հայաստանի դիրքը անկայուն է, իսկ Եվրասիական տնտեսական միությունում և տարածաշրջանում (Կիրգիզստանի տվյալները անհասանելի են) զբաղեցնում է ամենացածր տեղը²⁶: Չնայած ներքին շուկայի բազմազանությունը արտացոլող ցուցանիշը շարունակում է մնալ ցածր մակարդակում, միաժամանակ Հայաստանը տարեցտարի բարելավում է իր «Միկրոֆինանսական հաստատություններից չմարված վարկերի ՀՆԱ-ի հարաբերությամբ» ցուցանիշը՝ հասնելով 3%-ի և զբաղեցնելով **13-րդ** տեղը 133 երկրների մեջ: Էլեկտրոնային մասնակցության ենթաինդեքսով Հայաստանը


²⁵ ARMENIA'S INNOVATION JOURNEY IN 2024: ANALYZING KEY SHIFTS AND CHALLENGES <https://asue.am/upload/files/amberd/2024-year-6/5.pdf>, վերջին մուտք 15.02.2025թ.,

²⁶ Նույն տեղում

վերջին տարիներին տպավորիչ աճ է արձանագրել՝ գրավելով 64 դիրք, սակայն դեռևս հետ է Ղազաստանից(15), Թուրքիայից(18) և Ռուսաստանից(57):

Հայաստանի համար թեև չեն հաշվարկվել հետազոտությունների և զարգացման (R&D) ոլորտում ներդրումներ կատարող աշխարհի երեք խոշորագույն ընկերությունների, ինչպես նաև, երկրի երեք լավագույն համաշխարհային վարկանիշային համալսարանների, վենչուրային կապիտալի ներդրողների և այլ ցուցանիշներ, բայց այստեղ մեծ հնարավորություններ կան: Ըստ «Նոր հնարավորություններ Հայաստանի ստարտափ էկոհամակարգի համար» զեկույցի, ստարտափ էկոհամակարգերի զարգացվածության 1000 քաղաքի ցուցակում Երևանն աշխարհում 244-րդն է: Հայաստանի ՏՀՏ ընկերությունների ռեգիստրում գրանցված է 2322 ընկերություն, որոնց ընդհանուր հասույթը հասել է մեկ միլիարդ դոլարի սահմանը: 2021-2022թ. առաջին կիսամյակում Հայաստանի վենչուրային շուկայում արձանագրվել է 26 գործարք՝ 1.05 մլրդ դոլար ծավալով: Ըստ զեկույցի Հայաստանի ՏՏ ոլորտը վերջին այս 10 տարվա ընթացքում տարեկան միջին հաշվով աճել է 23%-ով²⁷: 2022թ. հանրագումարային ՏՀՏ ծառայությունների արտահանումը հասել էր 711.4 մլն ԱՄՆ դոլարի, որը կրկնակի ավելի է 2020թ. ցուցանիշից ու կազմում էր ՀՀ ընդհանուր արտահանման 7.1%-ը և համաշխարհային ՏՀՏ ծառայությունների արտահանման՝ 0.07%-ը²⁸: Աճը պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով Ռուսաստանից ոլորտի մասնագետների դեպի Հայաստան տեղաշարժմամբ: Ուսումնասիրությամբ դիտվում է ՏՏ ոլորտի վրա ավելի շատ արտաձին գործոնների ազդեցություն:

2018-2022 ժամանակահատվածում ոլորտում 47.5 տոկոսով տարեկան աճ է գրանցվել, ՀՆԱ-ի հարաբերակցությունը հասցնելով մինչև 7%-ի²⁹:



²⁷<https://enterprisearmenia.am/business-opportunities/sector/information-and-communication-technologies>, վերջին մուտք 15.02.2025թ.,

²⁸Նույն տեղում

²⁹ Նույն տեղում

Գծապատկեր 4.ՀՀ ՏՏ ոլորտի շրջանառությունը, արտահանումը և ներմուծումը 2020–2023 թթ., մլրդ ՀՀ դրամ³⁰

Այս ժամանակահատվածում ՏՏ ոլորտի շրջանառության ամենամեծ աճը գրանցվել է 2022 թվականին՝ նախորդ տարվա նկատմամբ աճել է 75.7%, իսկ 2023 թ.՝ 449 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 52.4%-ով: Կարծում ենք, որ ստեղծվող արտադրանքը Հայաստանին լիարժեք չի ծառայում: Դա է վկայում ոլորտում արտահանման աճը, որի ծավալը թեև ամենամեծը եղել է 2023 թ.՝ կազմելով 344.3 մլրդ ՀՀ դրամ, սակայն ընդհանուր շրջանառության մեջ առավել մեծ մասնաբաժին ունեցել է 2022թ.՝ 81.5%: Հատկանշական է, որ աճել է նաև ոլորտի ներմուծումը. 2021 թ., նախորդ տարվա համեմատությամբ, աճել է շուրջ 7 անգամ, 2022 թ.՝ շուրջ 2 անգամ, 2023 թ. աճել է 40%-ով՝ 8.7 մլրդ դրամ: Այնուամենայնիվ, տեխնոլոգիական այսպիսի զարգացումը կարող է խոսել Հայաստանի տնտեսության տեխնոլոգիաների ոչ թե յուրացման, այլ ստեղծման հնարավորությունների մասին:

Այսպիսով, Հայաստանը թեև 2024 թվականին ցուցաբերել է դրական տեղաշարժեր ինչպես նորարարության մուտքային, այնպես էլ ելքային ցուցանիշներում, այնուամենայնիվ լավագույն արդյունքները նկատելի են ելքային ցուցանիշներում: Նորարարության մուտքային ցուցանիշներում Հայաստանի համար դեռևս մշտական մարտահրավերներ են մնում՝ կրթության վրա պետական ծախսերի ցածր մակարդակը ՀՆԱ-ում, գիտության վրա պետական ծախսերի ցածր մակարդակը և մեկ միլիոն բնակչի հաշվով հետազոտողների փոքր թիվը: Համեմատությունները ցույց են տալիս, որ Հայաստանի թե՛ կրթության, թե՛ հետազոտության վրա պետական ծախսերի ցուցանիշները զգալիորեն հետ են մնում գլոբալ միջինից, ինչը ընդգծում է որպես մարտահրավեր ու բարելավման ուղղություն: 2022թվականին կրթության ծախսերը կազմել են 165.4 մլրդ դրամ, որոնք պետական բյուջեի ծախսերի 10.9 % են, երկրի ընդգծված ոչ շահեկան վիճակի բարելավման նպատակով 2024 թվականին նախորդ տարվա համեմատ այն աճել է շուրջ 47%-ով ու կազմել է 285 մլրդ դրամ: Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններին հատկացվել է 22.2 մլրդ դրամ գումար³¹:

Տարածաշրջանի երկրներից ՀՆԱ-ի մեջ հետազոտությունների ծախսերի տեսակարար կշռով առաջատարը ՌԴ-ն և Թուրքիան են՝ կազմելով 1.07 և 1.01, ՀՀ-ում՝ 0.21, Ադրբեջանում՝ 0.2, Վրաստանում՝ 0.28³²: Հայաստանի այս ցուցանիշը հետ է մնում միջինից բարձր եկամուտներ ունեցող երկրների 1.6 միջինից: Երկրի համար մարտահրավեր է նորարարության խթանման համար կարևոր կապերի՝ համալսարան-արդյունաբերություն համագործակցության և

³⁰ ՀՀ ԲՏԱ նախարարության տվյալները ըստ հաշվետվություն ներկայացրած ընկերությունների

³¹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ, 2025-2027, <https://www.gov.am/am/>, վերջին մուտք 10.02.2025թ, 2024, էջ 6,

³² N COMTRADE, WB, <https://data.worldbank.org/indicator/BX.GSR.GNFS.CD?locations=AM>

կլաստերի զարգացման մակարդակի, ցուցանիշների ցածր մակարդակը: Դեռ 2007թ չամաշխարհային բանկի գնահատմամբ Հայաստանի Հանրապետությունում առկա էր «չափազանց թույլ և մասնատված ինովացիոն համակարգ», ուր «բացակայում է փոխկապակցվածությունը արտադրության հատվածի, համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների միջև»: Ընդ որում, գիտության և արտադրության միջև կապերի զարգացած չլինելը հենց ազգային ինովացիոն համակարգի կառուցվածքային առավել թույլ օղակներից մեկն էր: Տեխնոլոգիական երկարաժամկետ փոփոխությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զարգացած երկրները, որոնք ունեն հարաբերականորեն կայացած ինստիտուցիոնալ միջավայր, աչքի են ընկնում տեխնոլոգիաների փոփոխության ինտենսիվությամբ: Վերջին տարիներին ՀՀ տնտեսական աճի ներուժը բարձրացել է՝ հասնելով 5.0-5.5%, որտեղ էական ազդեցություն է թողել ենթակառուցվածքներում կատարված ներդրումների շարունակական աճը³³: 2025-2027թթ միջնաժամկետ հատվածում կառավարությունը նպատակադրել է զարգացնել այնպիսի տնտեսություն, որը մի կողմից աշխարհին կառաջարկի տեխնոլոգիական և նորարարական արտադրանք, իսկ մյուս կողմից իր կառուցվող և արդիականացվող ենթակառուցվածքներով զգալիորեն կնպաստի տարածաշրջանի՝ առևտրային ու մարդկային հոսքեր սպասարկելու կարողությունների բարձրացմանը: Բարձր տեխնոլոգիաների ոլորտում մինչև 2026 թվականը կառավարությունը նախատեսում է ունենալ շուրջ 35000 զբաղվածներ և ոլորտի շրջանառությունը հասցնել 500 մլրդ դրամի, որը կկազմի ՀՆԱ-ի 6-7%-ը: 2020 թվականի տվյալներով այս ցուցանիշը 4% է³⁴: Այսպիսով, Հայաստանում բարձր տեխնոլոգիաների ոլորտում կստեղծվի առնվազն 16000 նոր աշխատատեղ³⁵: Այս տեսանկյունից ՀՀ կառավարությունը գիտելիքն ու նորարարությունը հռչակել է որպես տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժ³⁶:

Ամփոփելով, կարծում ենք՝

- ներկա զարգացումների պայմաններում Հայաստանի ինովացիոն հնարավորությունների վրա ազդում են ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական արտաձին ու ներծին գործոններ:

- ոլորտի զարգացման ամենավճռորոշ գործոնը կարող է դառնալ բարենպաստ ներքին միջավայրը՝ պահանջվող գիտելիքներով մարդկային կապիտալի առկայությամբ և ընդհանուր բարենպաստ հարկային օրենսդրությամբ:

³³ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են

³⁴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ, 2025-2027, <https://www.gov.am/am/>, վերջին մուտք 10.02.2025թ, 2024, էջ 6,

³⁵ 2021-2026թթ կառավարության ծրագիր, 2021, էջ 33, 102 էջ, <https://www.gov.am/am/>, վերջին մուտք 10.02.2025թ

³⁶ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ, 2025-2027, <https://www.gov.am/am/>, վերջին մուտք 10.02.2025թ, 2024, էջ 6,

• Գլոբալ ինովացիոն ինդեքսի գնահատման համար կիրառվող հենասյուների ցուցանիշների փոփոխությունները և ոլորտում մոտեցումներն ու ստեղծված հնարավորությունները ընդգծում են պետության առանցքային դերը ինովացիոն փոփոխությունների գործընթացներում:

Եզրակացություն: Գլոբալ ինդեքսի գնահատման համար կիրառվող հենասյուների ու ենթասյուների ցուցանիշները թույլ են տալիս համակողմանիորեն վերլուծություն կատարել և առանձնացնել ինովացիոն հնարավորությունների ու մարտահրավերների պատկերը երկրներում, նաև՝ ՀՀ-ում: Հայաստանը 2024 թվականին ցուցաբերել է դրական տեղաշարժեր ինչպես նորարարության մոտեցային, այնպես էլ ելքային ցուցանիշներում, այնուամենայնիվ լավագույն արդյունքները նկատելի են ելքային ցուցանիշներում: Նորարարության մոտեցային ցուցանիշներում Հայաստանի համար դեռևս մշտական մարտահրավերներ են մնում՝ կրթության վրա պետական ծախսերի ցածր մակարդակը ՀՆԱ-ի մեջ, գիտության վրա պետական ծախսերի ցածր մակարդակը և մեկ միլիոն բնակչի հաշվով հետազոտողների փոքր թիվը: Համեմատությունները ցույց են տալիս, որ Հայաստանի թե՛ կրթության, թե՛ հետազոտության վրա պետական ծախսերի ցուցանիշները զգալիորեն հետ են մնում գլոբալ միջինից, ինչը ընդգծում է որպես բարելավման ուղղություն: Տեխնոլոգիական երկարաժամկետ փոփոխությունների արդյունքում զարգացած երկրները, որոնք ունեն հարաբերականորեն կայացած ինստիտուցիոնալ միջավայր, աչքի են ընկնում տեխնոլոգիաների փոփոխության ինտենսիվությամբ: Ոլորտի ծավալների շարունակական բարձր աճը պայմանավորված է ներծին ու արտածին գործոններով: Հայաստանի ինովացիոն զարգացումը խոսում է տնտեսության տեխնոլոգիաների ոչ թե յուրացման, այլ ստեղծման հնարավորությունների մասին: Սակայն Հայաստանի թե՛ կրթության, թե՛ հետազոտության վրա պետական ծախսերի ցուցանիշները զգալիորեն հետ են մնում գլոբալ միջինից, ինչը ընդգծում է նաև կրթության ոլորտի բարելավման հրատապությունը: Նորագույն գիտելիքների հիման վրա ստեղծված նորարարությունը պետք է հանդիսանա համակարգվող, վերահսկվող և կառավարվող գործընթաց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կառավարության 2021-2026թթ ծրագիր , 2021, 102 էջ, <https://www.gov.am/files/docs/4586.pdf>,
2. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2023 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին, 108 էջ <https://www.gov.am/files/docs/5659.pdf>,
3. Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, 2025-2027, 2024, 220 էջ, https://www.e.gov.am/u_files/file/decrees/kar/GV63-96CC-FFA2-A9D8/1064.1.pdf,
4. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, <https://www.mineconomy.am/page/288>,

5. World Intellectual Property Organization (WIPO) (2023). Global Innovation Index 2023: Innovation in the face of uncertainty. Geneva: WIPO. DOI:10.34667/tind.48220
6. World Intellectual Property Organization (WIPO) (2024). Global Innovation Index 2024: Unlocking the Promise of Social Entrepreneurship, Geneva: WIPO, doi: 10.34667/tind.50062
7. Cornell University, INSEAD, and WIPO (2020). The Global Innovation Index 2020: Who Will Finance Innovation? Ithaca, Fontainebleau, and Geneva.
8. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման հիմքերը և հիմնական մարտահրավերները.- Եր.: ՀՊՏՀ □ԱՄԲԵՐԴ□ հետազոտական կենտրոն, «Տնտեսագետ» հրատ., 2024.- 148 էջ:
9. ARMENIA'S INNOVATION JOURNEY IN 2024: ANALYZING KEY SHIFTS AND CHALLENGES <https://asue.am/upload/files/amberd/2024-year-6/5.pdf>
10. А. В. Милехин, О. В. Иванов., Милехин, А.В. 2024. , Новый мир индексов : полный справочник по измерениям в демографии, социологии, экономике и других сферах жизни / А. В. Милехин, О. В. Иванов. — 6-е изд., доп. и расш.. — Москва : Эксмо, 266 с (Экономика для всех). — ISBN 978-5-04-195060-6.,
11. Белл Д. 1986. Социальные рамки информационного общества // Новая технократическая волна на Западе. М.: Прогресс, с. 784
12. В. Н. Бугорский, 2008, Сетевая экономика. М., «Финансы и статистика», ст.252 https://www.phantastike.com/economy/network_economics_textbook/djvu/view/,
13. Тоффлер Э. Третья волна. М.: ООО "Фирма "Издательство АСТ", 1999, сс.385
14. Фатхутдинов Р. А, Ф27 Инновационный менеджмент: Учебник для вузов. 6-е изд. — СПб.: Питер, 2011. — 448 с.: ил. — (Серия «Учебник для вузов»). <https://api.libraryksu.kg/elibrary/books/Fathutdinov%20Innavasionny%20menedgme nt8578.pdf>
15. López-Claros, A., & Mata, Y. N. (2010). The Innovation Capacity Index: Factors, Policies, and Institutions Driving Country Innovation. The Innovation for Development Report 2009–2010, 3–65. https://doi.org/10.1057/9780230285477_1
16. B.Jaruzelski, J.Loehr, and R.Holman, The Global Innovation 1000: Why Culture Is Key. Strategy + Business, No. 65, 2011. <https://innovationmanagement.se/wp-content/uploads/2010/11/The-Global-Innovation-1000-How-the-Top-Innovators-Keep-Winning.pdf>
17. Dr. Robert G. Cooper, Product Innovation Best Practices Series , P 3, Perspective: The Stage-Gate Idea-to-Launch Process – Update, What’s New and NexGen Systems, 24 p.,
18. Jorge Niosi, Mario Cimoli, Giovanni Dosi and Joseph E. Stiglitz (eds): Industrial policy and development: The political economy of capabilities accumulation, https://econpapers.repec.org/article/sprjoevec/v_3a22_3ay_3a2012_3ai_3a2_3ap_3a3_85-387.htm
19. <https://data.worldbank.org/indicator/BX.GSR.GNFS.CD?locations=AM>
20. <https://enterprisearmenia.am/business-opportunities/sector/information-and-communication-technologies>,
21. Nelson, R. (ed.), National Innovation Systems. A Comparative Analysis, Oxford University Press, New York/Oxford, 1993, 541 p, <https://books.google.am/books?id=C3Q8DwAAQBAJ&printsec=frontcover&hl=hy#v=onepage&q&f=false>,
22. Robert Engberg, Peter Altmann, Regulation and Technology Innovation: A Comparison of Stated and Formal Regulatory Barriers throughout the Technology Innovation Process, Journal of Technology Management &

- Innovation vol.10 no.3 Santiago oct. 2015
https://www.scielo.cl/scielo.php?script=sci_arttext&pid=S0718-27242015000300010
23. Ronald Dore , Technology policy and economic performance; lessons from Japan Christopher Freeman, (Frances Printer Publishers, London, New York, 1987) pp. 310,
24. Rongping Mua, Kangwei Chia, Kaihua Chena, National Innovation Capacity Index: A Cross-Country Comparative Analysis, 27 p., <http://idp-journal.casisd.cn/browse/al/al2019/oa/202003/P020200326667865413779.pdf>
25. The Innovation Imperative in Manufacturing: 2009. , How the United States Can Restore Its Edge, https://www.hbs.edu/ris/Publication%20Files/Innov_9211_610334c1-4b37-497d-a51a-ce18bbcf435.pdf
26. The International Innovation Index - BCG https://www.wipo.int/web-publications/global-innovation-index-2024/assets/67729/2000%20Global%20Innovation%20Index%202024_WEB3lite.pdf

ՀՀ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԳԼՈՐԱԼ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԻՆԴԵՔՍԻ

ԼԻԼԻԿ ԲԵԳԼԱՐՑԱՆ

Համառոտագիր

Հոդվածի արդիականությունը: Ինովացիոն տնտեսությունը տեղեկատվական հեղափոխության տրամաբանական շարունակությունն է, որը բնութագրվում է որպես պետության, գործարար միջավայրի և քաղաքացիների միջև սոցիալական, մշակութային, տնտեսական և տեխնոլոգիական հարաբերությունների ամբողջություն: Տնտեսության հետ գիտության և տեխնոլոգիայի փոխհարաբերությունների խնդիրը ավելի արդիական է դառնում, քանի որ այն ավելի համակարգված ու համալիր մոտեցում է պահանջում, թե տեսական-մեթոդաբանական ապահովման, և թե գործնական քաղաքականության իրականացման տեսանկյունից, որով պայմանավորված է հոդվածի արդիականությունը:

Հոդվածի նպատակը: Հոդվածի նպատակն է Գլոբալ ինովացիոն ինդեքսի գնահատման համար կիրառվող վերջին մի քանի տարիների ցուցանիշների ուսումնասիրությամբ բացահայտել ինովացիոն հնարավորությունները ՀՀ-ում, ընդգծել մարտահրավերները և առանձնացնել երկրում նոր տեխնոլոգիաների ստեղծման հենքեր:

Նպատակի լուծման համար դրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել Գլոբալ ինովացիոն ինդեքսի գնահատման համար կիրառվող հենասյուների ցուցանիշները՝ դրանք համեմատելով տարածաշրջանի երկրների ցուցանիշների հետ,

- առանձնացնել այն գործոնները, որոնք ինովացիոն զարգացման հիմքեր ստեղծող են,

- Հայաստանի տեխնոլոգիական զարգացման միտումների և առանձնահատկությունների վրա՝ ընդգծել մարտահրավերները պետական քաղաքականության մեջ:

Մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել ինովացիայի, նրա ազդեցության առանձնահատկությունների վերաբերյալ ինչպես օտարազգի, այնպես էլ՝ հայազգի տարբեր տնտեսագետների աշխատությունները և ինտերնետային կայքեր, վերջին մի քանի տարիների Գլոբալ Ինովացիոն Ինդեքսի զեկույցները: Օգտագործված են նաև այլ միջազգային կազմակերպությունների կողմից հավաքագրված և հրապարակված տվյալները, ՀՀ վիճակագրական կոմիտեի. ՀՀ կառավարության, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ՊԵԿ-ի հաշվետվությունների տվյալներ:

Ստացված արդյունքները: Հայաստանի ինովացիոն զարգացումը խոսում է տնտեսության տեխնոլոգիաների ոչ թե յուրացման, այլ ստեղծման հնարավորությունների մասին, ինչը ընդգծում են պետության առանցքային դերը ինովացիոն փոփոխությունների գործընթացներում:

Բանալի բառեր. Գլոբալ ինովացիոն Ինդեքս, տեղեկատվական հեղափոխություն, նորագույն զիտելիքներ, ինովացիոն հնարավորություններ:

ИННОВАЦИОННЫЕ ВОЗМОЖНОСТИ АРМЕНИИ ПО ДАННЫМ ГЛОБАЛЬНОГО ИНДЕКСА ИННОВАЦИЙ

ЛИЛИК БЕГЛАРЯН

Аннотация

Актуальность статьи: Инновационная экономика-это логическое продолжение информационной революции, которое характеризуется как совокупность социальных, культурных, экономических и технологических отношений между государством, деловой средой и гражданами. Проблема взаимодействия экономики с наукой и технологией становится все более актуальной, поскольку она требует более системного и комплексного подхода как с точки зрения теоретико-методологического обеспечения, так и с точки зрения реализации практической политики

Цель статьи: Цель статьи заключается в том, чтобы, исследовав показатели Глобального индекса инноваций за последние несколько лет, выявить инновационные возможности в Армении, подчеркнуть вызовы и выделить основу для создания новых технологий в стране. Для решения поставленной цели были определены следующие задачи:

- ✓ Исследовать показатели столпов Глобального индекса инноваций, сравнив их с показателями стран региона,
- ✓ Выделить факторы, которые создают основу для инновационного развития,
- ✓ Подчеркнуть вызовы государственной политики в контексте тенденций и особенностей технологического развития Армении

Методология: Теоретической основой исследования стали работы как иностранных, так и армянских экономистов, посвященные инновациям и особенностям их воздействия, а также интернет-ресурсы, отчеты Глобального индекса инноваций за последние несколько лет. Были использованы также данные, собранные и опубликованные другими международными организациями, а также данные отчетов Статистического комитета РА, правительства РА, Центрального банка РА и Налоговой службы РА.

Полученные результаты: Изменения показателей, используемых для оценки Глобального индекса инноваций, и подходы в этой области подчеркивают ключевую роль государства в процессе инновационных изменений.

Ключевые слова. Глобальный индекс инноваций, информационная революция, новейшие знания, инновационные возможности.

ARMENIA'S INNOVATION CAPABILITIES ACCORDING TO THE GLOBAL INNOVATION INDEX

LILIK BEGLARYAN

Abstract

The relevance of the article: The innovation economy is the logical continuation of the information revolution, characterized as a set of social, cultural, economic and technological relationships between the state, the business environment and citizens. The issue of the interaction between the economy, science and technology is becoming increasingly relevant as it requires a more systematic and comprehensive approach, both in terms of theoretical-methodological support and practical policy implementation.

The aim of the article: The aim of the article is to examine the indicators of the Global Innovation Index in recent years, identify innovation opportunities in Armenia, highlight the challenges and outline the basis for the creation of new technologies in the country. In line with the research objectives, the following tasks were formulated:

- Examine the pillars of the Global Innovation Index and compare them with the corresponding indicators of countries in the region.
- Identify the key factors underpinning innovative development.
- Analyze the challenges of state policy in the context of technological development trends and specificities in Armenia.

Methodology: The theoretical basis of the research consists of works of both foreign and Armenian economists devoted to innovations and their impact characteristics, as well as Internet resources and reports of the Global Innovation Index for recent years. Data collected and published by other international organizations were also used, as well as reports of the RA Statistical Committee, the Government of Armenia, the Central Bank of Armenia, and the State Revenue Committee of Armenia.

The main research findings: The changes in the indicators used to assess the Global Innovation Index and the approaches taken in this area highlight the key role of the state in the process of innovation change.

Keywords: Global Innovation Index, information revolution, cutting-edge knowledge, innovative opportunities.